Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2025թվականի օգոստոսի 26-ին, ժամը 15:00-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ»-ում՝ Ալավերդու համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, նիստերի դահլիճ) տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող գույքի աճուրդ – վաճառք՝ 1 լոտով:

Վաճառվում է՝

Լոտ 1. Ալավերդի համայնքի Ախթալա քաղաքի Աբովյան փողոց, 17 հասցեում գտնվող, 292.3 քմ ներքին մակերեսով հասարակական նշանակության վարչական շենքը և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.0137 հա մակերեսով հողամասը 4 435 000 (չորս միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%:

Նախավճարի չափը մեկնարկային գնի 50 % -ի չափով:

Համաձայն «ՔԾՓԿ» ԲԲ ընկերության կողմից 30.08.2024թ. տրված շինության տեխնիկական վիճակի մասին N 15/252 եզրակացության, 0.0137 հա մակերեսով հողամասում գտնվող վարչական շենքը բարոյապես մաշված է, ուժեղացում-վերականգնումը տեխնիկոտնտեսապես նպատակահարմար չէ և շենքը ենթակա է քանդման:

Գույքի նկատմամբ սահմանափակումներ չկան: Հողամասում առկա շինությունն օտարվում է պայմանով, որ երկու տարվա ընթացքում գնորդի կողմից կատարվեն շենքի ուժեղացման, վերականգնման կամ քանդման աշխատանքներ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2025թ. օգոստոսի 20-ը, ժամը 17:00-ն:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Ալավերդու համայնքապետարան (ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1, հեռ.՝ 0253-2-41-00, էլեկտրոնային փոստ՝ alaverdimunicipality@gmail.com):

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ